iPod
թվային աշխարհի գրպանում

iPod-ը հիշողության կրիչ է, որը միաժամանակ թույլ է տալիս լսել նրանում պահվող երաժշտությունը կամ նայել նկարները, տեսահոլովակները կամ խաղալ պարունակվող խաղերից մեկը: Այն Apple-ի նախագիծն է: iPod-ը ունի պրակտիկ և փոքր չափեր ինչի շնորհիվ էլ շատ հարմար է թե' որպես հիշողության կրիչ, թե' որպես նվարգակիչ օգտագործելու համար:

Դիտարկենք iPod-ի մի քանի մոդիֆիկացիաներ.

iPod Nano

Նվագարկիչը թույլ է տալիս լսել երաժշտություն, նայել նկարներ, որոշ խաղեր խաղալ, ինչպես նաև նշումներ անել: Այն բավականին փոքր է, բայց նաև ֆունկցիոնալ: Nano-ն ղեկավարվում է կուլտային այսպես կոչված Click abd Wheel անիվի միջոցով: Հեշտությամբ կարելի է տեղափոխվել ֆունկցիաների ցանկում և ընտրել

ցանկացածը: CowerFlow ֆունկցիայիկ օգնությամբ կարելի է տեղափոխվել նաև ալբոմից ալբոմ՝ տեսնելով և առաջնորդվելով նրանց շապիկներով:

iPod Nano-ն առաջարկվում է 2-8Gb հիշողությամբ և 5 գույներից որևէ մեկով՝ մոխրագույն, սև, կանաչ, երկնագույն, վարդագույն:

iPod Classic

160 Gb հիշողություն: Գլխավոր առավելությունը Nano-ի նկատմամբ: Սա արդեն, որպես ինֆորմացիայի կրիչ, կոշտ սկավառակ է իրենից ներկայացնում: Շնորհիվ հսկայական հիշողության Classic-ում կարելի է պահել մինչև 40.000 երգ և 200 ժամ տեսանյութ: Նույնպես ունի CowerFlow ֆունկցիան: Click and Wheel-i օգնությամբ կարելի է կարգավորել երաժշտության բարձրությունը, ընտրել կամ փնտրել երաժշտություն կատարողի, ալբոմի, ժանրի կամ կոմպոզիտորի անունով: 2.5 դույմանոց, 65000 գույն ունեցող դիսփլեյի վրա կարելի է խաղալ նաև խաղեր՝ չընդհատելով երաժշտությունը: iPod Classic-ը լրացուցիչ ունի նաև օրացույց, բլոկնոտ, էկրանի կոդավորում, վայրկյանաչափ և այլ օգտակար ֆունկցիաներ: Չափերը՝ 104x61x11mm, քաշը՝ 136 գրամ:

iPod Touch

Այս մոդելի հիմնական առավելությունը նրա այսպես կոչված թաչդիսփլեյն է, այսինքն բոլոր հրամանները կատարվում են էկրանին մատի հպումով: Սրա դիսփլեյի չափը 3.5 դույմ է, որը ավելի է մեծացնում նկարներ և տեսանյութեր նայելու հաճույքը:Այն նաև օժտված է Safary բրոուզերով, որը համարվում է լավագույնը այս ասպարեզում: Մնացած բոլոր ֆունկցիաները այն ժառանգել է iPod Classic-ից:

Սովորաբար iPod-ով երաժշտություն լսելու համար օգտագործում են ականջակալներ: Սակայն վերջերս Bowers & Wilkins ընկերությունը թողարկեց ակուստիկ համակարգ iPod-երի համար, որը անվանեց Zeppelin: Ընկերությունն իր առջև խնդիր էր դրել ստեղծել այնպիսի համակարգ, որը կունենա անսովոր դիզայն, բարձրակարգ հնչողություն և թանկ գին: Եվ ասենք, որ դա նրանց հաջողվել է:

Zeppelin-ը բավականին ծանր և մեծ է: Առջևի մասն իրենից ներկայացնում է բարձրախոս՝ ծածկված սև կտորով: Մեջտեղում B&W մակագրությամբ հենարանն է միացումով, որի վրա էլ տեղադրվում է iPod-ը: Չնայած գրեթե ցանկացած iPod համատեղելի է Zeppelin-ի հետ, սակայն iPod Touch-ը ավելի է համապատասխանում Zeppelin-ի դիզայնին և ավելի գեղեցիկ է նրա վրա, քան մնացածները: Հետևի մասում տեղադրված են USB, S-Video, auodio-jack մուտքերը: Airport-ի միջոցով կարելի է լսել նաև CD:

Zeppelin-ի միացման լարեր և այլ աքսեսուարներ չեն տրամադրվում. դրանք պետք է գնել առանձին: Հետը միայն տրվում է հեռակառավարման վահանակ իրականացված նույն ոճով:

Վերջում նշենք, որ համակարգը ամերիկյան շուկայում արժե մոտ 600 ԱՄՆ դոլար: Չնայած նրա կատարյալ հնչողությանը, այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ գնի մի մասը պահանջում են դիզայնի համար:

SEX ուալ

հեղափոխության նախաշեմին

«Մենք չենք կարող 21-րդ դարի երիտասարդներին վերաբերվել ճիշտ այնպես, ինչպես վերաբերվել ենք նրանց հասակակիցներին 100 տարի առաջ, քանի որ նրանք նման չեն իրենց նախնիներին և գտնվում են զարգացման բոլորովին այլ մակարդակի վրա»:

Վերջին ժամանակաշրջանում հայ երիտասարդության սեքսուալ դաստիարակությունը դարձել է ամենաշատ քննարկվող և աքտուալ թեմաներից մեկը: Նախկինում այդ մասին չէր խոսվում, այդ հարցը ընդհանուր քննարկման չէր հանվում: Մեր շրջապատում սեքսի մասին խոսակցությունները միշտ չէ, որ ընդունվել է:

Նախկինում հասարակությունում սեքսի տակ հասկացել են որոշոկի նպատակի հասնելու հնարավորություն: Այդ նպատակը եղել է սերունդ թողելը: Այժմ երիտասարդությունը փոխվել է: Սեքսը առաջին հերթին ընդունվում է որպես հաճույք, և աստճանաբար շատանում և սովորական են դառնում միներամուսնական սեռական հարաբերությունները: Այդ պատճառով էլ շատանում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների թիվը: Ծնողները խուսափում են իրենց երեխաներին սեքսի մասին բացատրություններ տալուց: Բայց չէ՞ ար երիտասարդությունը պետք է իմանա, թե ինչպիսի հետևանքներ կարող է քողնել ոչ անվտանգ սեռական ակտը:

Եվրոպական շատ դպրոցներում բարձր դասարանցիների դասացուցակում որպես անպայման առարկա ներառված է սեռական հարաբերությունների մասին դաս: Դա բոլորովին չի նաշանակում , որ այն պրոպագանդում էմինչամուսնական սեռական հարաբերությունները կամ կամ նպաստում դրան: Այդ դասընթացների անցկացումը սզբնական շրջանում նրանցից շատերի կողմից չեն ընդունվել և այլ բնութագրություններ են ստացել, սակայն շատացող վեներական հիվանդությունները կասկած չեն թողել, որ այդ դասընթացների անհրաժեշտությունը կա: Հայ երիկտասարդենրի 50%-ը կարծում է, որ Հայաստանում պետք են այդպիսի դասընթացներ, 38.10%-ը դեմ են այդ մտքին, 11.90%-ը չգիտեն՝ պետք են արդյոք այդ ահարաբերությունները, թե ոչ:

«Չեմ կարծում, որ դասերը կարող են ինչ-որ բան փոխել: Մի անգամ մեզ այդ մասին պատմել են, բայց ես ոչ մի նոր բան չիմացա: Ուսուցիչները պնդում էին, որ հարցեր տանքմ սակայն բոլորն ամաչում էին, և ոչ մի բան էլ չստացվեց: Երբ որոշեցինք անանուն գրությունների միջոցով հարցեր տալ, աղջիկներին ավելի շատ հետաքրքրում էր, թե ով է հարցի հեղինակը, քան բուն ինքը՝ հարցի պատասխանը :»(Արմեն, ԵՊՀ-ի ուսանող)

Ցածր կուրսի ուսանողուհիներից մեկը դասի էր եկել գունատ, կիսագիտակից վիճակում: Վիճակը լրիվ վատանալուց հետոկանչեցին մորը, որը նրան միանգամից տուն տարավ: Նրան սխալ բուժում նշանակեցին: Աղջիկը ընկերուհուց պարտքով փող էր վերցրել և ծնողներից վախենալով ըդհատել գաղտնի հղիությունը: Վիրահատությունը անհաջող թր անցել, և միայն մի քանի օր հետո, երբ բանն արդեն կյանքին ու մահվանն էր վերաբերվում , աղջիկը պատմել է ծնողներին: Դրանից հետո հաջողվում է աղջկան փրկել, բայց որքանով է վնասվել աղջկա առողջությունը և հետագայում կունենա՞ արդյոք երեխաներ, թե ոչ, հայտնի չէ:

Եվ վերջապես գաղտնիք չէ, որ ամուսնական երջանկության մեջ մեծ դեր ունի ամուսինների սեռական կյանքի հարմոնիան, որի համար նույնպես սեռական դաստիարակությանդերը չի կարելի բացառել:

Պետք է շատ լուրջ ուսումնասիրել սեռական դաստիարակության մասին ծրագրիկ ներառման հարցը: Ծնողների մի ամսը համաձայն է այդ ծրագրի ներառման հետ, իսկ մեծամասնությունը կտրականապես դեմ է: «»եր երեխաները չպետք է իմանան «ինչը ոնց է»: Ամեն ինչ իր ժամանակն ունի, երբ ամնուսնան այդ ժամանակ էլ կմանան»: Այսպիսին են նրանց կարծիքները:

Ֆիզիոլոգիական հասունացման հասած երիտասարդների ինտիմ կյանքի մասին գիտելիքների պակասը բերում է վեներոլոգիական հիվանդությունների թվի աճի, չնախատեսված հղիության, դեռահասների մոտ ագրեսիվության դրսևորման: Չմոռանանք նշել նաև,որ ամբողջ աշխարհում ամուսնալուծությունների մի զգալի մասը տեղի են ունենում սեռական կյանքում խնդիրների պատճառով:

Ծնողնե՛ր, մի կողմ դրեք արմատավորված դիրքորոշումները և առաջին հերթին մտածեք ձեր երեխաների առողջության և երջանկության մասին, ոչ թե «ով, ինչ կասի»: Պետք չէ, որ ձեր երեխաները մինչև ամուսնանալը մտածեն, որ «նրանց արագիլն է բերել»: